


ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ RA TAVUSH MARZ



Մարզկենտրոնը՝ ք. Իջևան	Marz centre Ijevan town
Տարածաշրջանները՝ Իջևան, Տավուշ, Նոյեմբերյան, Դիլիջան	Territories Ijevan, Tavush, Noyemberyan, Dilijan
Քաղաքները՝ Իջևան, Նոյեմբերյան, Այրում, Բերդ, Դիլիջան	Towns Ijevan, Noyemberyan, Ayrum, Berd, Dilijan

ՀՀ Տավուշի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հյուսիս-արևելյան հատվածում: Մարզը հարավ-արևելքում և հարավում սահմանակից է ՀՀ Գեղարքունիքի և Կոտայքի մարզերին, արևմուտքում՝ ՀՀ Լոռու մարզին և պետական սահմանով՝ Վրաստանին, հյուսիսում և արևելքում՝ Ադրբեջանին:

RA Tavush marz is situated in the north-eastern part of the Republic of Armenia. In the South-East and South the marz borders with RA Gegharqunik and Kotayk marzes, in the West it borders with RA Lori marz and Georgia, in the North and East – Azerbaijan.

Տարածքը Territory	2704 քառ.կմ / sq. km
ՀՀ տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը Territory share of the marz in the territory of RA	9.1 %
Քաղաքային համայնքներ Urban communities	5
Գյուղական համայնքներ Rural communities	57
Քաղաքներ Towns	5
Գյուղեր Villages	60
Բնակչության թվաքանակը 2010թ. հունվարի 1-ի դրությամբ Population number as of January 1, 2010	134.4 հազ.մարդ/ ths. persons
այդ թվում՝ / including:	
քաղաքային urban	52.6 հազ.մարդ/ ths. persons
գյուղական rural	81.8 հազ.մարդ/ ths. persons
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը, 2009թ. Share of marz population size in RA population size, 2009	4.1%
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը Share of urban population size	39.1%
Գյուղատնտեսական նշանակության հողեր Agricultural land	112115 հա/ ha
այդ թվում՝ վարելահողեր including: arable land	25415 հա/ ha

Մարզի կենտրոնով դեպի հյուսիս-արևելք հոսում է Աղստև գետը: Ծովի մակարդակին ամենամոտ կետը (ՀՀ ռելիեֆի ամենացածր կետը) գտնվում է Դեբեդավան գյուղի մոտ՝ 390մ, ամենաբարձր կետը Միսպիոթի

Aghstev river flows to the south-east through the marz centre. The nearest point to the sea level (the highest point of RA relief) is situated near the Debedavan village (390 m), the highest point - Murghuz mountain (2993 m) of

լեռնաշղթայի Մուրղուզ լեռն է՝ 2993 մ :

ՀՀ Տավուշի մարզը տարածվում է Փոքր Կովկասի լեռնաշղթաների արտաքին շարի վրա (Վիրահայոց, Գուգարաց և Միափորի լեռներ): Գտնվում է ՀՀ չափավոր խոնավ տարածաշրջանում: Արևափայլքի տարեկան տևողությունը 1900-2000 ժամ է: Ամառները լինում են տաք, ձմեռները՝ մեղմ: Գետերը պատկանում են Կասպից ծովի (Կուր գետի) ավազանին և սնվում են հալոցքային, ստորերկրյա և անձրևային ջրերից: Բնական լիճը՝ Դիլիջանի մոտ գտնվող Պարզ լիճն է: Այստեղ են գտնվում Ջողազի, Հախումի, Տավուշի, Այգեձորի և Իջևանի արհեստական ջրամբարները:

Մարզի ընդհանուր մակերեսի 40.3%-ը զբաղեցնում են խառն անտառները, որոնք աչքի են ընկնում բուսական և կենդանական աշխարհի բազմազանությամբ: Բնության նախաստեղծ վիճակի պահպանության, առավել հարստացման և տեղական պայմաններում նոր տեսակների ստացման նպատակով Աղստևի ավազանում ստեղծված են Դիլիջանի պետական արգելոցը և Իջևանի անտառային այգին (դենդրոպարկը): Մարզի և հատկապես Աղստևի հովտի բնակլիմայական պայմանները (մեղմ կլիմա, թրթվածնով հարուստ լեռնային մաքուր օդ, հանքային բուժիչ ջրեր, անտառներ, դեղաբույսերով հարուստ լեռնաշխարհ) չափազանց նպաստավոր են բնակչության հանգստի կազմակերպման, առողջության վերականգման և միջազգային տուրիզմի զարգացման համար:

Մարզը համեմատաբար աղքատ է օգտակար հանածոներով: Արդյունաբերական նշանակություն ունեն բենտոնիտային կավը, կրաքարերը, վիմագրական քարը, դոլոմիտը, ֆելզիտը: Աղստև գետի հովիտը հարուստ է հանքային ջրերով, որտեղ կազմակերպված է դրանց արտադրությունը:

Մարզի կենտրոնով է անցնում Հյուսիսային Կովկաս-Թբիլիսի-Երևան գազատարը: Մարզով ձգվում են 146 կմ միջպետական, 253 կմ հանրապետական նշանակության ճանապարհներ: Աղստևի ձորով է անցնում Իջևան-Հրազդան երկաթուղու 70 կմ-ոց հատվածը: Հյուսիսային սահմանի երկայնքով, Դեբեդի ափով անցնում է Երևան-Թբիլիսի երկաթուղու 7 կմ-ոց հատվածը:

2009թ.-ին մարզի **տնտեսության** հիմնական հատվածների տեսակարար կշիռները հանրապետության համապատասխան ճյուղերի ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 0.8%,
- գյուղատնտեսություն՝ 4.4%,
- շինարարություն՝ 1.4%,
- մանրածախ առևտուր՝ 1.2%,
- ծառայություններ՝ 0.6%:

Մարզը հանրապետության վառ արտահայտված գյուղատնտեսական շրջաններից է: Անասնաբուծության մեջ առաջատար ճյուղեր են համարվում խոշոր եղջերավոր անասնաբուծությունն ու խոզաբուծությունը, իսկ բուսաբուծության մեջ՝ հացահատիկային մշակաբույսերի մշակությունն ու խաղողագործությունը: Ծրագրեր են իրականացվում պտղատու այգիների վերականգնման ուղղությամբ: Վերջին տարիներից զարգացում է ապրում նաև մեղվաբուծությունը:

Մարզի **արդյունաբերության** առաջատար ճյուղը մշակող արդյունաբերությունն է: Առավել զերակշռող են

Miapori mountain range.

RA Tavush marz is extended on the external line of Small Caucasus mountain ranges (Virahayots, Gugrats and Miapor mountains) and is situated in the moderate damp region of the Republic of Armenia. Annual duration of the sun radiance is 1900-2000 hours. Summers are warm, winters - mild. Rivers belong to the Caspian sea (Kur river) basin and live on thawed, underground, rainy waters. The natural lake is Parz lake that is situated near the Dilijan. Joghaz, Hakhum, Tavush, Aygedzor and Ijevan reservoirs were situated here too.

The marz nature is wonderful. Mixed forests comprise 40.3% of total surface that are striking by variety of fauna and flora, incomparable monuments of natural inheritance. Dilijan state preservation and Ijevan forest garden (arboretum) have been created in the Aghstev basin with a purpose of keeping the situation created by nature, more enrichment and receiving new kinds in local conditions. Climatic conditions (mild climate, mountainous clear air rich with oxygen, mineral medicinal waters, forests, mountainous land rich with herbs) of marz and, in particular, Aghstev valley are extremely favourable for the organization of population rest, recovery of health and promotion of international tourism.

The marz is comparatively poor with useful minerals. Bentonite clay, limestone, lithographic stone, dolomite, felsites are of marz importance. Aghstev river valley is rich with mineral waters that are bottle filled as well.

The Northern Caucasus-Tbilisi-Yerevan gas-bearer goes through the **marz** centre. 146 km interstate, 253 km of republican importance roads are extended through the marz. 70 km part of Ijevan-Hrazdan railway goes through the Aghstev gorge. 7 km part of Yerevan-Tbilisi railway goes through the Northern border lengthwise, Debed bank.

In 2009 the share of **economy** main branches of RA Tavush marz in total volume of correspondent branches of the republic comprised

- industry 0.8 %,
- agriculture 4.4 %,
- construction 1.4 %,
- retail trade 1.2 %,
- services 0.6 %.

Marz is pronounced agricultural districts of the republic. In animal husbandry the main branches are cow and pig breeding and in plant growing the most developed branches are grain and grape growing. During last years beekeeping develops too.

The main branch of **economy** of the marz is manufacturing. The food industry and woodworking

սննդի արդյունաբերությունը և փայտամշակումը : Մարզում արտադրվող արդյունաբերական արտադրանքից արտաքին շուկա են արտահանվում գինիներ, հանքային ջուր, քարե և փայտե արտադրատեսակներ :

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով:

Մարզկենտրոն Իջևան քաղաքը (2009թ. տարեվերջին՝ 20.6 հազ. բնակիչ) գտնվում է Երևանից 132 կմ հեռավորության վրա : Մարզի հյուսիս-արևելյան հատվածի վարչական, արդյունաբերական, կրթամշակութային կենտրոնն է և տրանսպորտային հանգույցը : Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է (մասնավորապես՝ փայտամշակումը, սննդամթերքի, հանքային ջրի և գինու արտադրությունը) : Իջևան քաղաքը հայտնի է նաև գորգագործությամբ :

Դիլիջան քաղաքի (2009թ. տարեվերջին՝ 15.6 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 96 կմ է : Քաղաքի արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առանձնանում է սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունը : Լայն ճանաչում է ստացել «Դիլիջան Ֆրոլովա» հանքային ջուրը :

Նոյեմբերյան քաղաքի (2009թ. տարեվերջին՝ 5.5 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 185 կմ է : Քաղաքի տնտեսական կյանքում էական դեր ունի գյուղատնտեսությունը, որի հիմնական ուղղությունն անասնաբուծությունն ու դաշտավարությունն է :

Այրում քաղաքի (2009թ. տարեվերջին՝ 2.4 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 205 կմ է : Այն կայարանամերձ քաղաք է, բնակչության հիմնական զբաղվածությունը մանրածախ առևտուրն է : Աշխատանքներ են տարվում Այրումի պահածոների գործարանի վերագործարկման ուղղությամբ :

Բերդ քաղաքի (2009թ. տարեվերջին՝ 8.5 հազ. բնակիչ) հեռավորությունը Երևանից 186 կմ է : Քաղաքի տնտեսական կյանքում գերակշռողը բազմաձյուղ գյուղատնտեսությունն է, որի մեջ առանձնանում են խոշոր և մանր եղջերավոր անասնաբուծությունն ու դաշտավարությունը :

continue to be a leading branches of industry. Wine, mineral waters, stone and wood products are exported to external markets.

Freight and passenger transportations in the marz are implemented by road transport.

RA Tavush marz centre is Ijevan town (in 2009 20.6 ths. inhabitants) The distance from Yerevan is 132 km. It is the administrative, industrial, education and cultural centre and transport junction of the whole north-eastern part. The main trend of town industry is manufacturing (particularly, woodworking, production of food, mineral water and wine). Ijevan town is also known by carpet making.

The distance of **Dilijan**, resort town from Yerevan is 96 km. Population comprised 15.6 ths. persons in the end of 2009. The main trend of town industry is manufacturing, in which the food and beverages production is separated. “Dilijan Frolova” mineral water has received wide recognition.

The distance of **Noyemberyan town** (5.5 ths. inhabitants in the end of the year 2009) from Yerevan is 185 km. Agriculture has an essential role in the town’s economic life, the main trend of which is field-crop cultivation and animal husbandry.

The distance of **Ayrum town** from Yerevan is 205 km (in the end of 2009 population number comprised 2.4 ths. inhabitants). The town is located near station, and the main job of population is retail trade.

The distance of **Berd town** (8.5 ths. inhabitants in 2009) from Yerevan is 186 km. The main trend of town industry is multibranch agriculture, wich is separated by small cattle husbandry and field-crop cultivation.

**ՄԱՆՐԱԾԱԽ ԱՌԵՎՏՈՒ ՕԲՅԵԿՏՆԵՐ
RETAIL TRADE UNITS**

	Քանակը Number					
	2005	2006	2007	2008	2009	
Մանրածախ առևտրի օբյեկտներ, ընդամենը	835	862	864	993	1071	Retail trade units, total
այդ թվում՝						<i>including</i>
խանութներ	351	447	446	560	652	shops
կրպակներ	443	361	372	393	380	kiosks
գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ	2	2	2	2	2	markets of agricultural produce
սպառողական ապրանքների շուկաներ	2	2	2	2	1	markets of consumer goods
առևտրի այլ օբյեկտներ	37	50	42	36	36	other trade units

**ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
EDUCATION ESTABLISHMENTS**

	Քանակը Number					
	2005	2006	2007	2008	2009	
Հաստատություններ, ընդամենը	153	152	150	150	151	Establishments, total
<i>այդ թվում՝</i>						<i>including</i>
պետական նախադպրոցական	44	44	43	43	43	pre-school establishment
պետական հանրակրթական դպրոցներ	79	82	80	81	81	state general education school
ոչ պետական հանրակրթական դպրոցներ	5	-	1	-	-	non-state general education school
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ	17	16	16	16	17	music and art school youth creative (cultural) centre
պետական նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական	...	1	1	1	1	state per-professional (workmanship) educational establishment
պետական միջին մասնագիտական ուսումնական	5	6	6	6	6	state secondary specialized education establishment
ոչ պետական միջին մասնագիտական ուսումնական	1	1	1	1	1	non-state secondary specialized education establishment
պետական բարձրագույն ուսումնական	-	-	-	-	-	state higher education establishment
պետական բարձրագույն ուսումնական հաստատության մասնաճյուղ	2	2	2	2	2	branch of state higher education establishment
ոչ պետական բարձրագույն ուսումնական	-	-	-	-	-	non-state higher education establishment

**ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ
URBAN COMMUNITIES**

Համայնքի անվանումը	Community name	Բնակավայրի անվանումը	Settlement name	Մշտական բնակչության թվաքանակը Population de jure number as of	
				2009թ. հունվարի 1-ի դրությամբ՝, մարդ January 1 st , 2009, people	2010թ. հունվարի 1-ի դրությամբ՝, մարդ January 1 st , 2010, people
Իջևան	Ijevan	ք. Իջևան	t. Ijevan	20491	20574
Բերդ	Berd	ք. Բերդ	t. Berd	8528	8515
Դիլիջան	Dilijan	ք. Դիլիջան	t. Dilijan	15601	15614
Նոյեմբերյան	Noyemberyan	ք. Նոյեմբերյան	t. Noyemberyan	5494	5503
Այրում	Ayrum	ք. Այրում	t. Ayrum	2371	2389

**ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ
RURAL COMMUNITIES**

	Համայնքի անվանումը	Community name	Բնակավայրի անվանումը Settlement name	Մշտական բնակչության թվաքանակը** Population de jure number** as of	
				2009թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ January 1, 2009, people	2010թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ January 1, 2010, people
1	Ազատամուտ	Azatomut		2664	2707
2	Ակնաղբյուր	Aknaghbyur		436	435
3	Աղավնավանք	Aghavnavank		293	295
4	Աճարկուտ	Acharkut		187	186
5	Այգեհովիտ	Aygehovit	•Այգեհովիտ / Aygehovit •Կայան / Kayan	3439	3437
6	Այգեձոր	Aygedzor		2591	2566
7	Այգեպար	Aygepar		612	625
8	Աչաջուր	Achajur		4476	4514
9	Արծվաբերդ	Artsvaberd		3271	3260
10	Արճիս	Artchis		1068	1078
11	Բագրատաշեն	Bagratashen		2811	2833
12	Բաղանիս	Baghanis		752	804
13	Բարեկամավան	Barekamavan		468	418
14	Բերդավան	Berdavan		3275	3287
15	Բերքաբեր	Berkaber		526	526
16	Գանձաքար	Gandzakar		3504	3541
17	Գետահովիտ	Getahovit		2069	2085
18	Գոշ	Gosh		1148	1154
19	Դեբեդավան	Debedavan		658	636
20	Դեղձավան	Deghdzavan		243	237
21	Դիտավան	Ditavan		322	324
22	Դովեղ	Dovegh		569	577
23	Ենոքավան	Enokavan		489	505
24	Զորական	Zorakan		1044	1048
25	Թեղուտ	Teghut		1426	1437
26	Իծաքար	Itsakar		310	307
27	Լճկաձոր	Lchkadzor		438	439
28	Լուսահովիտ	Lusahovit		387	392
29	Լուսաձոր	Lusadzor		704	699
30	Խաշթառակ	Khashtarak		1804	1811
31	Խաչարձան	Khachardzan	•Խաչարձան / Khachardzan •Գեղատափ/ Geghatap •Ճերմակավան/ Tchernakavan	392	335
32	Ծաղկավան (Իջևանի տարածաշրջան)	Tsaghkavan (Ijevan region)		554	513
33	Ծաղկավան Տավուշի տարածաշրջան)	Tsaghkavan (Tavush region)		963	967
34	Կիրանց	Kirants		289	286
35	Կոթի	Koti		2258	2247
36	Կողբ	Koghb		4341	4372
37	Հաղարծին	Haghartsin		3996	3928
38	Հաղթանակ	Haghtanak		1165	1198
39	Հովք	Hovk		385	392
40	Մոսեսգեղ	Mosesgegh		2021	1998
41	Նավուր	Navur		1176	1156
42	Ներքին Կարմիր աղբյուր	Nerkin Karmir aghbyur		1092	1097

	Համայնքի անվանումը	Community name	Բնակավայրի անվանումը Settlement name	Մշտական բնակչության թվաքանակը” Population de jure number” as of	
				2009թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ January 1, 2009, people	2010թ. հունվարի 1-ի դրությամբ, մարդ January 1, 2010, people
43	Նորաշեն	Norashen		1736	1728
44	Ոսկեպար	Voskepar		875	876
45	Ոսկեվան	Voskevan		1425	1416
46	Չինարի	Chinari		1271	1256
47	Չինչին	Chinchin		677	678
48	Չորաթան	Choratan		1052	1047
49	Պարավաքար	Paravakar		1750	1749
50	Պտղավան	Ptghavan		875	883
51	Ջուջևան	Jujevan		626	620
52	Սարիգյուղ	Sarigyugh		1262	1237
53	Սևքար	Sevkar		2053	2053
54	Վազաշեն	Vazashen		864	857
55	Վարագավան	Varagavan		707	671
56	Վերին Կարմիր աղբյուր	Verin Karmir aghbyur		1727	1721
57	Տավուշ	Tavush		1576	1600

**ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ 10 000 ԲՆԱԿԻՉ ՈՒՆԵՑՈՂ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԻ ՇԱՐՔ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐ, 2009թ.
SOME SOCIAL INDICATORS OF DISTRICT COMMUNITY WITH
10 000 POPULATION IN RA TAVUSH MARZ, 2009**

	Ընդամենը Total	նրանցից՝ including:		
		կանայք ¹ women ¹	տղամարդիկ ¹ men ¹	
Բնակչությունը, մարդ	10000	5076	4924	Population, person
Ծնվածներ, մարդ	134	63	71	Births, person
Մահացածներ, մարդ	103	49	54	Deaths, person
Ամուսնություններ	52	X	X	Marriages
Ամուսնալուծություններ	5	X	X	Divorces
Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր բնակմակերեսով, քառ.մ	32.7	X	X	Total area of housing stock provided per inhabitant, square metre
Կրթության ոլորտ. հաճախումը կրթօջախներ, մարդ՝				Education sphere, attendance to education establishments, person
նախադպրոցական	167	82	85	pre-school
հանրակրթական	1260	616	644	schools of general education
երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մասնկապատանեկան- ստեղծագործական կենտրոններ	127	88	39	musical, art schools, creative centers for children
նախնական մասնագիտական (արհես- տագործական)	18	2	16	primary vocational
միջին մասնագիտական	79	41	38	secondary
բարձրագույն մասնագիտական	136	75	61	higher
Առողջապահության ոլորտ՝				Public health sphere
հաճախել են պոլիկլինիկա տարվա ընթացքում (հաճախումների քանակը)	25536	annual attendance to polyclinic during the year (number of attendances)
Մարզիկներ, մարդ	54	10	44	Athletes, person
Զբաղվածներ, մարդ	3760	Employed, person
նրանցից՝ գիտական հիմնարկներում	-	-	-	of which - in Science establishments
նրանցից՝ գիտության դոկտոր	-	-	-	of which - doctors of Science
գիտության թեկնածուներ	-	-	-	candidates of Science
ուսուցիչներ	154	126	28	teachers
բժիշկներ	19	physicians
միջին բուժանձնակազմ	47	paramedical personnel
Գործազուրկներ /պաշտոնապես գրանցված/, մարդ	362	246	116	Unemployed /officially registered/ person
Սոցիալական ապահովության ոլորտ				Social insurance sphere
ընդամենը կենսաթոշակառուներ, տարեվերջի դրությամբ, մարդ	1895	total pensioners/ as of the end of the year/ person
աղքատության ընտանեկան նպաստ և միանվագ դրամական օգնություն ստացող ընտանիքներ	452	X	X	families that get poverty family benefit and one-time benefit
Հաճախումների քանակը տարվա ընթացքում				Annual attendance during the year
գրադարան	29634	library
թատրոն	-	-	-	theatre
համերգ	-	-	-	concert
թանգարան	156	museum
Իրավական ոլորտ				Law sphere
հանցագործության դեպքերի քանակը, տարվա ընթացքում	39	X	X	total crimes, during the year
այդ թվում՝ ոչ մեծ ծանրության	16	X	X	of which - not grave crime
միջին ծանրության	7	X	X	medium crime
ծանր	15	X	X	grave crime
ատանձնապես ծանր	1	X	X	special grave crime

¹ Ցուցանիշները հաշվարկային են:
The indicators are accountable.